

Այդպէս էր տիրող տրամադրութիւնը, պսիխոզը... «Ներոպան պատրաստ էր միջամտելու, հարկ էր միայն հրահրել գժգոհութեան ու բողոքի «Կայծեր»ը... Անփորձ, քրնջոյ մեծցած երիտասարդ մը, գրեթէ պատանի մը, որ Շուշիի ու Բագուի ուսական դըպրոցներու մէջ կը հիացնէր շրջապատը իր արտակարգ ընդունակութիւններով, զարգացումով ու պերճախօսութեամբ, որ կոչուած էր մեր մտաւոր կեանքի առաջնակարգ սիւներէն մէկը լինելու, երիտասարդ մը, որ կեանքի մէջ ատրճանակի երես չէր տեսած, զրկուեցաւ հոն, արցունքի եւ կոուի դաշտը, որպէս յեղափոխական գործիչ, առաջնորդ, խմբապետ եւ այրուեցաւ դէպի կրակ սլացող թիթեռնիկի պէս*»...

Անոր օրինակին հետեւեց, երկու տարի յետոյ, մի այլ երիտասարդ, նոյն Շուշիի մեր

*) Հնչակեան ղեկավարները, ինչպէս եւ յետագայում Դաշնակցութիւնը, երկիր կը ճամբէին անխտիր ամէնքը եւ բնաւ չէին մտահոգուած իւրաքանչիւրին իր համապատասխան դերը յատկացնելու. բրիտանական իմաստուն ասուացքը "The right man in the right place" չէր ընդունուած հայ յեղափոխական ղեկավարող շրջաններում... գուցէ ոչ մի ուրիշ երկրի ազատագրական շարժման մէջ չէ եղած ոյժերու այնպիսի անողոք վատնումն (gasillage) ինչպէս մեզ մօտ...

Զաքարեանի տխուր ողիսականը, անոր մահուան պարագաները տիպիկ արտայայտութիւններ են այդ հիւանդազին հոգեբանութեան: Չեմ գիտեր՝ սորվեցա՞ւ արդեօք խեղճ Բարսեղը դէթ ատրճանակ մարդելու արուեստը. յայտնի է միայն, որ երկիր մտնելով, առաջին իսկ քայլափոխին նետուեցաւ դայիկ երախը: Երբ զապտիկները կը հետապնդէին գինքը, երիտասարդ առաքեալը թագնուեցաւ տան մը ծխնելոյզին մէջ: Յկան դահիճները վար քաշեցին կծկուած, վախէն կիսամեռ մարմինը եւ սպաննեցին, որպէս որսի անպաշտպան թռչուն մը...

Այդպէս վերջացուց իր կարճատեւ քառիչքը այդ դեռափթիթ ու շքեղ մտաւորականը, հազիւ միայն քսան երեք դարուն անցուցած:

ընկերներէն, Զաքարեանի հասակակից — Մարտիրոս Սարուխանեանը, որ 1895-ին ձգեց Պետերբուրգի արհեստագիտական դպրոցը, անցաւ Լոնտոն, ապա Վան, ուր եղաւ Հնչակեան առաջնորդ ու խմբապետ Մարտիկ անունով եւ նահատակուեցաւ 1896-ին մեր Պետօի ու Աւետիսեանի հետ Ս. Բարթոլոմէոս վանքի մօտերը:

Երկա՛յն ձգուեց շարանը դարբաղցի ուսանող եւ անուս երիտասարդներու — ամէնքը Բաֆֆիի Կրօնական Ուխտէն — որոնք թողին տուն, տեղ, հարազատներ, ուսում ու կառիէր եւ գնացին զոհելու իրենց մատող կեանքերը հայրենիքի ազատութեան սեղանին: Վարդանը 90-ական թուականներու սկիզբներուն հոն էր արդէն, Վասպուրականի սահմաններու վերայ եւ Դերեկի վանքում, Թաւաքայեան վանահօր հետ միասին կը մարդուէր կուռելու արուեստի մէջ, քրդերու դէմ մղուած յաճախակի բախումներու ընթացքին: Հոն էր 1891-էն ի վեր — մէկ ոտքը Պարսկաստանում, միւսը Վասպուրականում — Նիկոլ Դումանը, Դաշնակցութեան ամենէն ընտիր ռազմիկներէն եւ միանգամայն մտաւորական առաջնորդներէն մէկը, նոյնքան ուժեղ իր իմացականութեամբ, որքան հոգևով ու խառնուածքով:

Հոն էր, պարսկական Հայաստանի մէջ — որ միշտ նախադուռն էր բուն երկրի — մեր ողբացեալ Յոնան Դաւթեանը՝ ուսուցչի եւ միանգամայն քարոզչի հանգամանքով: Նիկոլի հետ միասին նա աւարտեր էր Շուշուայ թեմականը եւ այնտեղ փարեր էր Բաֆֆիի Ուխտին: Հոն էին Սաչէնի, Վարանդայի զիւղերէն բազմաթիւ պարզ զինուորներ, որոնցմէ մէկ քանիսը մասնակցեցին Սանասորի կռուին՝ Վարդանի ու Դումանի առաջնորդութեամբ:

Քանի մը տարի յետոյ հետեւեցին դարբաղցիներու ուրիշ շարքեր — Արամ, Իշխան, (Վանի Իշխանը), Նիկոլ — կրտսեր Նիկոլը, որ ընկաւ 1897-ին Վասպուրականի մէկ կրտուին մէջ, Խէչօ (Մածուն-Խէչօն, Գիրջամալի յանդուգն ռազմիկներէն), Մենակ, Առստամեան, Թուման (որ իր ամբողջ խմբի հետ մորթըւեցաւ ուս-թրքական սահմանադիսին, գնդապետ Բըկովի ներկայութեամբ), Էւայլն, Էւայլն: